Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2117

Годинник - Пруг
Пісня прибуждення

1905

32
7-73

82
Ղ-73ՀԱՅԱՆ - ՊՈՒՇ
132
07 JUN 2005
12 NOV 2000

ԴԵՊԻԷ ԴԻ ՍԱԿԱՒՈՐԸ

Թարգմանեց

Ե. Բ. Ե ԻԿՈՂՈՍԵԱՆ

ԱՆ ԵՐԵՄԱՆ ԴՐԱՊՈՂ

ՏՊԱՐԱՆ ՑԱԿՈՎԲ ՂԱՍԱՊԵԱՆ ՑԻ
1905

2117

ԴԵՂԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՐԸ

Շեյլոկ Խոլմսը մի այնպիսի մարդ էր որ հազիւ էր կատարում որևէ մարմնամարզութիւն, որևէ զբոսանք, բայց չնայելով դրան, շատ շատ քիչ մարդ կը լիներ, որ ունենար նրա չափ մարմնական ոյժ։ Նա այդ ոյժի հետ միասին բարձրահասակ էր և լայնաթիկունք, կարծես մի ը մբիշ լիներ։ Եթե որևէ վարժութիւն աննպատակ էր, նա այդպիսին համարում էր ոյժերի աւելորդ վատնողութիւն, բայց առիթը եկած տեղում, Խոլմսը ցոյց կը տար իր ոյժը, իսկ այսպիսի դէպքում նա անպայման տոկուն էր։ Իսկ որ զարմանալի էր նրա ոյժը, չնայելով որ նա ուտելիքի մէջ չափաւոր էր։ Սովորաբար Խոլմսը վարում էր կոշտ խոժոռ կեանք, որ իւր պարզութեամբ շատ աչքի ընկնող երևոյթ էր։ Եթե կար որևէ բան, որով կարելի լինէր նրան մեղադրել, այդ այն էր, որ նա սիրում էր գործածել կոկային։ Այս միջոցին էր նա դիմում, երբ որ կարդում էր անբովանդակ լրագրներ, կամ երբ ուզում էր բողոքել կեանքի տափակութեան դէմ։

Գարնան սկզբներում, մի գեղեցիկ օր, կ'ամենալով մի փոքր հանգստանալ, նա ինձ առաջարկեց միասին զբոսնել ծառաստանում։ Դեռ նոր էին սկսել արմատները ծլել և շաղանակիների մեծ, երկար, հնգաթերթ տերևները փթթել և շառաւիղներ արձակել։ Ամբողջ երկու ժամ մենք թափառում էինք ծառաստանում։ Մենք լէինք խօսում իրար հետ, որոհետև առանձին խօսելու էլ նիւթ չունէինք, քանի որ լաւ գիտէինք միմեանց գաղտնիքները։

Ժամը հինգն էր արդէն, երբ մենք տուն դարձանք, որը գտնւում էր Բէքս Հիլ միտում։

— Ձեզ մի ինչ որ պարոն հարցրեց,— ասաց մեր փոքր ծառան, դուռը բանալիս։

Խոլմսը ինձ նայեց յանդիմանօրէն։

— Ա՛խ թէ ի՞նչ է նշանակում հաշիւ յետոյ զբօսնելը,— ասաց նա։ Ե՞րբ եկաւ անծանօթը, վաղուց է։

— Ո՛չ, պարոն, հենց նոր գնաց։

— Ինչո՞ւ նրան չխնդրեցի մի փոքր սպասել։

— Հրաւիրեցի ներս, նա բաւական սպասեց։

Ե՞րկար մնաց։

— Համարեա կէս ժամ։ Նա շատ անհանգիստ մարդ էր երևում։ Ամբողջ միջոցը նա մտնում էր գալիս սենեակի մէջ, կարծես ցնորուած լինի։ Այդ բոլորը ես դիտում էի բակում, դռան ճեղքից։ Յետոյ նա սենեակից դուրս վազեց ու գոռաց։

— Վերջապես շա՞տ կուշանալ քո տէրը։ Ես խնդրեցի նրան մի փոքր էլ սպասել մինչև ձեր վերադարձը, բայց նա ասաց։

— Այստեղ սիրտս նեղանում է, աւելի լաւ է դուրսը մաքուր օդում կ'սպասեմ, ես շուտով կը-դառնամ։

Խորհուրդ կըտամ, պարո՛ն, նրան չընդունէք, եթէ որ նորից գալու լինի։

— Լա՛ւ, լա՛ւ,— ասաց Խոլմսը, ու տուն մտանք։

— Յաւում եմ, Վաթսոն, որ նա չէ սպասել։ Այցելուի անհամբերութիւնից դատելով պէտք է կարծել, որ նա առանձին լուրջ գործ ունի։ Ա՜խ, այս ինչ ծխամորճ է սեղանի վրայ ընկած, եբեւէ քոնն է։ Գուցէ նա է մոռացմամբ թողել այստեղ։ Ի՜նչ գեղեցիկ ծխիչ է, երկար փողով։ Հետաքրքիր է իմանալ, թէ Լոնդոնում կարելի՞ է գտնել իսկական «քիրազ» ծխիչներ։ Ասում են, որ իսկական «քիրազը» վրան բծեր կ'ունենայ, այդ է պատճառը, որ ծխողները արհեստական «քիրազներ»ի վրայ պատրաստել են տալիս կեղծ բծեր։

Երևում է որ սրա տէրը շատ գրգռուած լինելուց, թողել է ծխամորճը։ Ես մի բան էլ եմ նշմարում, որ նա անկասկած շատ է սիրում այս ծխամորճը։

— Ինչից գիտես, որ տէրը շատ է սիրում, հարցրի Խոլմսին հետաքրքրուելով։

— Սա արժէ եօթը շիլլինգ։ բայց տես, երկու տեղ օղակ է զցած, իսկ այդ ցոյց է տալիս, որ երկու տեղից կոտրուել է և նա կարկատան է արել։ Թէև նորոգելն աւելի թանգ է նստում, բայց նորը չուզելով գնել, հինն է նորոգել տուել։

—Օղակներից կարելի է այդպէս եզրակացնել։

Նա ուշադրութեամբ դիտում էր ծխամորճը, ձեռքերի մէջ շուռ ու մուռ տալով։

Խոլմսը ծխամորճը ձեռքում բռնած՝ բթամատը դիպցնում էր ծխիչին։ Այդ դրութեամբ նման էր պրոֆէսորի, որ մարդակազմութեան դասախօսութիւն էր կարդում համալսարանի ուսանողներին, ցոյց տալով նրանց մի նոր ոսկր։

—Ծխամորճը շատ հետաքրքրական է,—ասաց նա.—սրա վրայ ես նշմարում եմ տիրոջ բնաւորութեան դրօշմը, թէև սրա վրայ եղած նշանները ինձ և քեզ համար առանձին կարևոր չեն։ Ծխամորճի տէրը շատ ուժեղ է, ձախլիկ, և ամուր ատամներ ունի. նա անհոգ է վերաբերւում դէպ՝ իւր սովորութիւնները և նրանց ինչ կերպ գործ դնելը չի իմանում։

Իմ բարեկամն աւելի հեռու գնաց իւր դատողութիւնների մէջ, բայց ես նկատեցի, որ նա աջ աչքի ծայրով ինձ վրայ է նայում, ուզենալով համոզուել, թէ արդեօք իրան լսում եմ, թէ ոչ։

—Ծխամորճի տիրոջ ունևոր լինելը կասկածելի է, որովհետև նա ծխում է եօթը շիլլինգանոց ծխիչով—վրայ բերի ես։

—Նրա ծխած ծխախոտի ունցիան ութը պէնս արժէ,—ասաց Խոլմսը, բռի մէջ թափ տալով «լուլի» մէջ եղած մնացորդը։ Եթէ այս գնի կիսով էլ ծխախոտ բանեցնէր, այնուամենայնիւ, խնայողութեան մասին չէր հոգայ։

—Այդ լաւ, դու ասա ինձ միւս եզրակացութիւններդ։

—Նա վատ սովորութիւն ունի ծխիչը բռնելու, բռնում է լապտերի կամ գազի ծորակի բոցի վրայ. նայիր, տես, նրա մի կողմն այրուել է, անկասկած լուցկին այսպէս չէր այրիլ։ Դժուար է ընդունել, որ նա միշտ լուցկին միևնոյն կողմից բռնէր։ Լապտերի վրայ բռնելով, չի կարելի «լուլէն» այրելուց ազատել։ Այդ չէ բոլորը, նկատում ես, այրուել է աջ կողմը։

Փորձիր լապտերի վրայ վառել ծխախոտդ, այն ժամանակ դու կըհամոզուիս փորձով, որ եթէ աջ ձեռքով բռնես, անպայման ձախ կողմը կըմօտենայ կրակին, այլ ոչ թէ աջ կողմը։ Կարող է և այնպէս պատահել, որ աջ կողմն էլ այրուի, բայց այդ հազուադէպ կըլինի։ Միևնոյն ժամանակ տեսնում ես, ծխիչը խիստ կրծոտուած է, իսկ այս ուժեղ և ամուր ատամների տէր մարդը կարող էր անել։ Սակայն եթէ չեմ սխալւում, ահա լսում է նրա քայլերի ձայնը, որ գալիս է սանդուխտների վրայից։ Նրա անձնաւորութիւնն աւելի հետաքրքիր է, քան թէ նրա ծխամորճի հետազօտութիւնը։

Իրաւի, մի երկու վայրկեան յետոյ, յանկարծ դուռը բացուեց, և սենեակ մտաւ մի բարձրահասակ մարդ։ Նա հագնուած էր խիստ ճաշակով, բայց շատ պարզ, մութ մոխրագոյն թիկնոց և կրում էր նոյնպիսի լայն եզր գլխարկ, որ խաղացնում էր ձեռքում։

Դատելով այցելուի տեսքից, նա երեսուն տարեկան էր, բայց իսկապէս աւելի մեծ կը լինէր։

—Ներեցէք,—ասաց նա վրդովուած կերպով, ինձ թւում է թէ դուռը բաղխեցի։ Այո՛, անշուշտ բաղխեցի։ Ես մի փոքր յուզուած եմ, ուստի խընդրում եմ ներող լինիք անքաղաքավարութեանս։

Այս ասելիս՝ նա տրորեց ճակատը, ինչպէս որ առհասարակ անում են նեարդային մարդիկ յուզուած ժամանակ և իսկոյն ընկաւ աթոռի վրայ։

—Ինձ թւում է, թէ դուք մի քանի գիշեր չէք քնել,—ասաց Խոլմսը սովորական հաճելի ձայնով։ Անքնութիւնը ամենածանր աշխատանքից, նոյն իսկ խնճոյքից աւելի է խանգարում նեարդերը։ Կարող եմ ձեզ հարցնել, թէ ինչով կարող եմ ձեզ պէտք գալ։

—Ես ցանկանում եմ ձեզ հետ խորհրդակցել։ Զըգիտէ՞ թէ ինչ անեմ, ինձ այնպէս է թւում, որ ողջ դանքս մանր կտորների է բաժանուում։

—Չեմ հասկանում, չըլինի կամենում էք խորհրդակցել հետս, ինչպէս ոստիկանութեան մի թագուն գործակատարի հետ։

—Ո՛չ, ես կամենում եմ իմանալ ձեր կարծիքը, որպէս մի հմուտ փաստաբանի և առօրեայ կեանքի մէջ փորձուած մարդու։ Ես մոլորուել եմ և չգիտեմ ինչ միջոցի դիմեմ, ինչպէս վարուեմ, ես յոյս ունիմ, որ միայն դուք կրնաք ինձ փրկարար խորհուրդ։

Նա խօսում էր հակիրճ, ուժեղ և նեարդային շեշտով։ Այցելուի խօսելու ձևից պարզապէս նկատուում էր, որ պատմելիքը նրան պատճառում էր սրտի սաստիկ կսկիծ։

—Գիտէք,— ասաց նա։—Շատ փափուկ խընդիր է ասելիքս, դժուար է օտարներին պատմել ընտանեկան գործերը։ Ծանր է օտար մարդկանց հետ խօսել, երբ նրանք բոլորովին ծանօթ չեն քո ներքին կեանքի հետ։ Օ՜հ, որքան դառն է, դառը... Բայց ինչ էլ որ լինի, չեմ կարող երկար դիմանալ։ Նեարդերս խիստ լարուած են, այնպէս որ պէտք է խորհրդակցեմ ակամայ։

—Լսեցէք, բարեկամ, պարոն Գրանտ Մօնրօ,—խօսեց Խոլմսը։

Այցելուն խայթուածի պէս վեր թռաւ աթոռից։

—Ի՞նչպէս,—գոռաց նա,—դուք արդէն անունը էլ գիտէք։

—Եթէ կամենում էք թագցնել ձեր անձը,—ասաց ժպտալով Խոլմսը,—այն ժամանակ խորհուրդ կըտամ ձեր անունը միւս անգամ չըգրէք գըլխարկի մէջ, կամ շուռ տաք գլխարկը միւս կողմը։ Այս սենեակում ես և բարեկամս լսել ենք շատ տարօրինակ ու ծանր դաղտնիքներ և յաջող նախատեսութեան շնորհիւ, թեթևացրել ենք շատ մարդկանց ցաւերը։ Յոյս ունիմ, որ մեզ կըյաջողուի նոյնը անել և ձեզ։ Կարելի է արդեօք խնդրել ձեզ, որ եթէ անյետաձգելի գործ է, շուտով դէպքը պատմելուն անցնինք։

Մեր այցելուն երկրորդ անգամ ձեռքը քսեց ճակատին, որով կարծես ուզում էր լիշողութիւնը նորոգել։ Նրա ամեն մի շարժումն ու արտասանութիւնը ցոյց էին տալիս, որ նա բնականից շատ հպարտ, զգոյշ ու քաշուող մարդ էր, այդ պատճառով էլ ստիպուած է եղել երկար ժամանակ թագցնել իւր սրտի վէրքերը։ Վերջապէս նա ձեռքով մի ուժգին շարժում արեց ու սկսեց պատմել։

—Տեսէք թէ բանն ինչումն է, պարոն Խոլմս։ Երեք տարի է որ ես ամուսնացել եմ, այդքան միջոցում մենք զգում էինք մեզ բախտաւոր և շատ էլ սիրում էինք միմեանց։ Կարծես մենք ստեղծուած լինէինք միմեանց համար։ Մեր մէջ չէ պատահել ոչ մի տարաձայնութիւն, անբաւականութեան ոչ մի ստուեր չէ անցել մեր մէջ։ Իսկ այժմ, այս վերջին երկու շաբաթում, կարծես մէջներս մեծ անջրպետ է կազմուել։ Զգում եմ, որ կնոջս կեանքում, նրա բոլոր մտքերի մէջ ինչ որ խորթ բան կայ ինձ համար, որպէս թէ նա իմ կինը չէ, այլ փողոցում հանդիպած մի կին։ Մի խօսքով, այն օրից մինչև օրս մենք դարձել ենք խորթ և ես վճռել եմ ինչ էլ որ լինի, իմանալ այս փոփոխութեան պատճառը։

Փաստերին անցնելուց առաջ, պարտաւոր եմ ձեզ հաղորդել, պարոն Խոլմս, դարձեալ մի շատ կարևոր կէտ, որ Էֆֆին ինձ սիրում է։ Ես թոյլ չեմ տալիս մի փոքրիկ կասկածելու, որ սեռալում եմ հաշուիս մէջ։ Նա սիրում է ինձ իւր բո-

լոր սրտով, հոգու բոլոր ուժով և զուցէ մինչև այժմ ոչ ոքի այնպէս չէ սիրել, ինչպէս որ ինձ է սիրում։ Ես այդ զգում եմ խորը կերպով, ինչպէս կնոջից սիրուած իւրաքանչիւր մարդ կարող է զգալ։ Բայց մեր մէջ կայ մի ինչ որ գաղտնիք, որի շնորհիւ մենք այլևս առաջուայ բախտաւոր սիրող ամուսինները չենք կարող լինել, քանի որ գաղտնիքը չէ բացուել։

—Արդեօք չի կարելի փաստերին դիմել, պարոն Մօնրօ,—կտրեց նրան Խոլմսը, ակներև անհամբերութեամբ։

—Ի՞նչու չէ, ես ձեզ կըպատմեմ բոլորը, ինչ որ գիտեմ Էֆֆու մասին։ Երբ ես նրան առաջին անգամ հանդիպեցի, նա դեռատի այրի էր։ Այն ժամանակ նա քսան և հինգ տարեկան էր։ Նրա անունն էր տիկին Էբրոն։ Նա Ամերիկա տեղափոխուել էր շատ վաղ, որտեղ և ամուսնացել էր Էբրոն անունով մի երդուեալ հաւատարմատարի հետ, որը գործունեայ և բանիմաց մարդ էր։ Այդ ամուսնութիւնից նրանք ունեցան մի երեխայ, որը փոքր հասակում մեռաւ դեղին տենդից։ Նոյն բախտին հանդիպեց նաև տիկնոջ ամուսինը։ Նրա մահուան վկայականը ես տեսել եմ։ Ամուսնի կորստից յետոյ նա թողեց Ամերիկան և իւր պառաւ օրիորդ մօրաքրոջ հետ տեղափոխուեց Պինները։ Ամուսինը մեռնելիս թողել էր չորս հազար հինգ հարիւր ֆունտ ստեռլինգի մի խոշոր գումար, որը դրուած էր մի ապահով ձեռնարկու-

թեան մէջ և բերում էր տարեկան եօթը տոկոս արդիւնք։ Պիններում տիկինը հազիւ թէ վեց ամիս մնացած լինէր, երբ ես նրան պատահեցի։ Շուտով մենք միմեանց հաւանեցինք ու մի քանի շաբաթ չանցած՝ ամուսնացանք։

Ես պարապում եմ գայլուկի առևտրով, որից ստանում եմ զուտ արդիւնք եօթ կամ ութ հարիւր ֆունտ ստերլինգ։ Նշանակում է, դուք տեսնում էք, որ մենք կարող ենք ապրել շատ ճոխ, ուստի և վարձեցինք Նորբուրի ամարանոցը, տարեկան ութ հարիւր ֆունտ ստերլինգի։ Մեր կալուածքը գիւղի նման է, դրա հետ միասին ունի այն առաւելութիւնը, որ գտնւում է քաղաքին մօտիկ։ Մեզանից քիչ հեռու կայ մի հիւրանոց և տուն, իսկ մեր դէմը, դաշտի ճանապարհի վրայ կայ մի տնակ, որի ճակատը մեր կողմն է գտնւում։ Այս շինութիւններից զատ էլ ուրիշ ոչ մի շէնք չկայ մինչև կայարանը։ Գործերիս անհրաժեշտութիւնից ստիպուած եմ տարուայ որոշ եղանակներին մենակ քաղաքում ապրել։ Սմառը համարեա անգործ եմ։ Այդ ժամանակ մենք կատարելապէս վայելում ենք գիւղական կեանքի բոլոր քաղցրութիւնները։ Արդէն ձեզ ասացի, որ մեր մէջ երբէք տարաձայնութիւն չէ եղել։

Սակայն այստեղ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ մի հանգամանքի վրայ։ Պսակուելուցս յետոյ, հակառակ իմ ցանկութեան, կինս իւր բոլոր փողերն ինձ յանձնեց

Ես հակառակ էի այդ բանին, նրա համար որ, եթէ որևէ կերպով գործերս վատ գնային, նա կըզրկուէր իւր ունեցածից։ Կինս ստիպեց ինձ և ես հնազանդուեցի նրա կամքին։ Սրանից վեց շաբաթ առաջ նա եկաւ ինձ մօտ և ասաց։

—Ժակ, փողերը քեզ տալիս, դու ինձ խոստացար հարկաւոր դէպքում վերադարձնել...

—Անշուշտ,—պատասխանեցի—խօսք չկայ որ նրանք ամբողջովին քոնն են

—Ուրեմն,—ասաց նա,—տո՛ւր ինձ հարիւր ֆունտ։

Նրա պահանջը մի փոքր ինձ զարմացրեց, բայց կարծեցի, որ նա այդ գումարն ուզում է որևէ բաւականութեան համար, գուցէ շորերի կամ կանացի զարդարանքների վրայ ծախսելու համար։

—Այդքան մեծ գումարն ինչ պէտք է անես, հարցրի նրան։

—Ո՜հ, պատասխանեց նա ցաւալի ձայնով, դու խոստացար իմ սեղանաւորը լինել. իսկ սեղանաւորները երբէք փոխատուներին չեն հարցնում, թէ ինչու էք յետ ստանում։

—Եթէ այդքան քեզ պէտք են, իհարկէ կըտամ,—ասացի։

—Ո՜հ, այո՛, շատ հարկաւոր են։

—Գոնէ կասես, ինձ թէ ինչ պէտք է անես։

—Գուցէ մի քանի օրից յետոյ ասեմ, բայց ոչ այժմ։

Այս խոստումից ազատուելով՝ ես հանգստա-

ցայ և այդ առաջին անգամն էր, որից երևաց, թէ նա ինձանից գաղտնիք ունի։ Նա չէքն ստացաւ, իսկ գաղտնիքի մասին էլ չըյիշեցի։ Գուցէ այս դէպքը էական կապ չունի յետոյ տեղի ունեցածի հետ, բայց և այնպէս աւելորդ չէր առաջուց պատմելը։ Արդէն ասացի, որ մեր տանից քիչ հեռու կայ մի փոքրիկ տնակ։ Դէպի այդ տնակը գնալու համար, պէտք է գնալ մեծ ճանապարհով, յետոյ շեղուել դէպի նեղ կածանը, որ տանում է շոտլանտական եղևիններին անտառը։ Ես շատ անգամ զբօսնում եմ այդ անտառում, զովանալով սաղարթախիտ ծառերի ստուերների տակ։ Զբօսանքից դառնալիս, ես յաճախ կանգնում էի տնակի առաջ, որը համարեա ուրթ ամիս է ամայի էր։ Միշտ մտածել եմ թէ որպիսի յարմարութիւններ կարելի է ստեղծել այդ տեղում։ Նրա կտուրը բոլորովին հնացել է և կորել է այծմորուքի կանաչ թփերի մէջ։

Երկուշաբթի երեկոյեան զբօսանքից վերադառնալիս, ինձ հանդիպեց մի դատարկ սայլ։ Պարզապէս երևում էր, որ սայլը դառնում էր տնակի մօտից։ Մօտենալով տնակին, տեսայ դռան առաջ տնային իրեղէններ, որ ներս էին կրում. կասկած չկար, որ տնակը մէկը վարձել էր։ Որպէս մի հետաքրքիր մարդ, որ չգիտէ ինչ անէ անգործութիւնից, պատուհանից նայեցի, տեսնելու թէ ով են իմ նոր հարևանները։

Պատահմամբ վերև նայելով՝ վերի յարկի բաց պատուհանից տեսայ մի անծանօթ դէմք, որ ուղ-

ղել էր իւր հայեացքն ինձ վրայ։

Զըգիտեմ, պարոն Խոլմս, ումն էր այդ դէմքը, բայց, խոստովանում եմ, նրա հայեացքն ինձ սառուցեցրեց։ Դժբախտաբար այնքան հեռու էի կանգնած, որ չըկարողացայ պարզ որոշել նրա դէմքի գծերը, միայն նրա վրայ կային անբնական գծեր, որոնք մարդկային չէին։ Գոնէ այդպիսի տպաւորութիւն թողեց ինձ վրայ։ Երբ ես առաջ շարժուեցի տեսնելու ինձ վրայ նայողին, նա իսկոյն անյայտացաւ. նրա շարժումն այնքան արագ էր, որ կարծես նրան քաշեցին սենեակի խորքը։ Այնտեղ հինգ բոպէի չափ կանգնեցի, յուսալով թէ կրկին կըտեսնեմ և կըվերլուծեմ ստացածս տպաւորութիւնը, բայց զուր անցաւ ժամանակս. դէմքը չըյայտնուեց նորից։ Դժուարանում եմ հասկանալ թէ ով էր նա և ինչ դէմք էր, կնոջ թէ տղամարդու, թէև լաւ տեսայ, որ նրա գոյնը դեղին էր և անկենդան։ Նրա կերպարանքը սառն էր ու անշարժ, այդպիսի գծեր չի կարելի տեսնել մարդկանց մէջ։ Այս հանգամանքն այնքան հետաքրքրեց ու վախեցրեց ինձ, որ ես վճռեցի աւելի մօտից նայել ու ծանօթանալ այդ տան նորեկ տարօրինակ կեցողների հետ։ Ահա այդ մտքով ու դիտաւորութեամբ մօտեցայ դռանը և բաղխեցի։ Իսկոյն և եթ դուռը բացուեց և իմ դէմ դուրս եկաւ մի բարձրահասակ, նիհար կին, վայրենի գիշատիչ դէմքով։

—Ի՞նչ էք կամենում,—հարցրեց նա,—հիւ-

սիսային երկրի կոշտ արտասանութեամբ։

— Ես ձեր հարևանն եմ,— ասացի նրան,— ցոյց տալով իմ տունը,— տեսնելով որ դուք նոր եք եկել այստեղ, եկայ իմանալու թէ արդեօք որևէ ծառայութիւն չեմ կարող անել ձեզ համար։

— Ո՞վ է ձեզ խնդրում միջամտել,— գոռաց նա և իսկոյն դուռը վրայ զարկեց։

Ես տուն դարձայ զարմացած ու ամօթից կարմրած։ Երեկոյեան աշխատում էի մոռանալ դէպքը, մտածելով զանազան նիւթերի մասին։ Զնայելով դրան, միտքս յամառութեամբ վերադառնում էր դէպի պատուհանի տարօրինակ երևոյթը և դէպի պառաւ կնոջ կոպիտ վարմունքը։ Լաւ իմանալով կանանց նեարդային բնաւորութիւնը, դրա հետ միասին և սնահաւատութիւնը, որոշեցի ոչինչ չասել կնոջս ինձ հետ պատահած անախորժ դէպքի մասին։ Միայն քնելու ժամանակ, հարևանցի կերպով հաղորդեցի նրան, որ ինչ-որ անծանօթ մարդիկ են եկել տնակում բնակուելու։ Կինս ոչ մի խօսք չասեց նրանց մասին։ Սովորաբար ես շատ խոր քնել գիտեմ։ Իմ բնաւորութիւնս ամենքին յայտնի է մեր տան մէջ, երբ մի անգամ քնեցի, էլ զարթնել չեմ կարող։ Միայն այդ գիշեր, երևի օրուայ դէպքից յուզուած՝ քնեցի սովորականից թոյլ։ Քնիս մէջ յանկարծ ինձ թուաց, թէ սենեակում մէկը շարժւում է։ Քիչ քիչ զարթնելով՝ տեսայ կնոջս բոլորովին հագնուած, թիկնոցով ու գլխարկով, որ դուրս էր գնում

Ս. ՍՅԱՆ

սենեակից։ Քնիս մէջ շրթունքներս ինչ-որ անկապ բառեր էին շշնջում, իսկ երբ աչքերս բացի, մութ գաղտ լոյսի մէջ տեսայ կնոջս դէմքի արտայայտութիւնը։ Նրա դէմքը ծածկուած էր մեռելային գալկութեամբ, նրա շնչառութիւնը ծանր էր և յուզմունքից դողում էր, միևնոյն ժամանակ նայում էր անթարթ կերպով անկողնիս վրայ, ակներև վախենում էր որ կարող եմ զարթնել։ Իսկ երբ կինս համոզուեց, որ քնած եմ, նա յուշիկ քայլերով դուրս գնաց սենեակից։ Մի երկու վայրկեանից յետոյ լսեցի գլխաւոր մուտքի դռան ճռռոցը։ Ես նստեցի անկողնիս մէջ և շոշափեցի գլուխս որ համոզուեմ, քնած եմ թէ արթուն։ Արդէն առաւօտեան ժամը երեքն էր։ Ի՞նչ էր անում այդ ժամին կինս դրսում։ Մի քանի վայրկեան մնացի տարակուսած, աշխատելով որևէ բացատրութիւն գտնել, բայց քանի շատ էի մտածում, այնքան աւելի թւում էր ինձ համար դէպքը հանելուկ ու տարօրինակ։ Երբ արդէն պատրաստւում էի տեղիցս վեր կենալ, վարից դուռը զգուշութեամբ բացուեց և աստիճանների վրայ լսուեցին կնոջս ոտնաձայները։

— Ո՞ւր էիր գնացել, Էֆֆի,— հարցրի նրան, երբ նա սենեակ մտաւ։

Զայնս լսելիս, նա դողաց բոլոր մարմնով. նրա կուրծքից թեթև ճիչ դուրս թռաւ։

Այդ հանգամանքն ինձ աւելի շփոթեց, որովհետև ակամայ այլայլուելով՝ նա իրան մատնեց և

ցոյց տուեց իւր յանցաւոր լինելը։ Կնոջս միշտ նկատել էի որպէս մաքուր և պարզ բնաւորութեան տէր, այն ինչ նրա գաղտագողի սենեակից դուրս գալը մեղաւորցնում էր նրան։

—Զարթուն ես, ծակ,—ասաց նա, նեարդային ծիծաղով, իսկ ես կարծում էի թէ դեռ քնած կըլինիս։

—Որտեղ էիր, խստութեամբ հարցրի նորից։

—Ես չէի կարծում, որ իմ դուրս գնալը քեզ կըվախեցնէ,—ասաց նա,—հանելով ծածկոցը. այդ միջոցին նրա մատները դողում էին կոճակներն արձակելիս։—Ինձ հետ երբէք այսպէս բան չէր պատահել. սենեակում այնպէս տօթ զգացի որ քիչ էր մնում խեղդուէի. դրա համար վճռեցի տանից դուրս գալ մի փոքր դրսում թարմ օդ շնչելու իսկ այժմ լաւ եմ զգում ինձ։

Խօսելու ժամանակ նա երբէք չէր նայում աչքերիս մէջ. նրա ձայնի մէջ լսւում էին խորթ ելևէջներ։ Ես հաստատ համոզուած էի, որ կինս ինձ խաբում է։ Զուզեցի պատասխանել նրան, երեսը պատի կողմը դարձրի, մտքիս մէջ հազար տեսակ կասկածներ ու ենթադրութիւններ անելով։ Ինչ գաղտնիք էր, որ նա թագցնում էր ինձանից, ուր պէտք է գնացած լինէր այդ գիշերուայ պահուն։ Կարծում էի որ երբէք հանգստանալու չէի մինչև որ ստոյգը չիմանալի։ Միևնոյն ժամանակ վախենում էի նրան ստիպել, որովհետև կարող էր խաբել ինձ։ Քունը փախաւ աչքերիցս, այլևս չկարողացայ քնել մինչև առաւօտ, և մտածում էի անհաւանական բաների մասին։

Առաւօտը քաղաք պէտք է գնայի, բայց շատ յուզուած լինելով՝ չէի կարող լուրջ գործով պարապել։ Յուզուած էր նաև կինս։ Նրա ինձ վրայ ձգած երբեմնական հարցական հայացքներից ես հասկանում էի, որ նա աշխատում էր դուրս գալ այդ յիմար գրութիւնից, որովհետև զգում էր, որ ես համոզուած չէի նրա տուած բացատրութիւններից։ Նախաճաշի ժամանակ մենք մտքերս փոխանակում էինք կցկտուր խօսքերով, որից յետոյ շուտով գնացի զբօսնելու, որ սովորաբար առաւօտեան զով եղանակներին կատարում էի։ Զբօսնելով հասայ մինչև Բիւրեղի պալատը, մի ժամ նստեցի խոտերի վրայ հանգստանալու և ապա ժամը մէկի կէսին վերադարձայ Նոր-Բուրն։

Պատահաբար պէտք է անցնէի նոյն տնակի առջևից։ Մի բոպէ կանգնեցի տեսնելու երեկ ելեկոյեան ինձ վրայ նայող սոսկալի դէմքը։ Բայց, երևակայեցէք, պարոն Խոյմս, իմ զարմանքը, երբ դուռը բացուեց և այնտեղից դուրս եկաւ կինս։ Ես զարմանքից քարացայ. իսկ երբ մեր հայեացքները իրար հանդիպեցին, պարզապէս տեսայ, որ նրա դէմքը այլայլուած է։ Ինձ նոյնպէս երևեց, որ նա սկզբում ուզում էր թագնուել տնակում, բայց հաւանական է, զգալով այդպիսի վարմունքի անլարմարութիւնը, գոյնը հետեց քոթանի նման, աշխատելով արհեստական ժպիտ ցոյց տալ։

—Ես եկայ այստեղ, ծակ, իմանալու համար թէ արդեօք մեր նոր հարևանները կարօտ չեն իմ օգնութեանը։ Բայց ինչու այդպէս խիստ նայում ես վրաս, գուցէ դժգոհ ես որևէ բանից, կամ բարկացած ես վրաս։

—Այժմ հասկանում եմ թէ ուր էիր գնացել գիշերս,—ասացի։

—Ինչից եզրակացրիր,—պատասխանեց նա։

—Ես հաստատ համոզուած եմ, որ դու գիշերս այստեղ էիր. միայն ասա, ով է կենում այս տան մէջ, որին գիշերով այցելութեան եկար։

—Իմ այստեղ գալս առաջին անգամն է։

—Ի՞նչպէս ես համարձակւում խաբել ինձ,—գոռացի։ Տեսնում ես ահա քո ձայնը քեզ մատնում է։ Մինչև այժմ ես որևէ բան թագցրել եմ քեզանից։ Հէնց հիմա կըգնամ այնտեղ և գաղտնիքը կ'իմանամ։

—Ո՛չ, ոչ, ծակ, 'ի սէր Աստծու, մի գնար, աղաչեց նա վախեցած։

Ես մի քանի քայլ առաջ գնացի դէպի դուռը։ Կինս բոլոր ոյժով կախ ընկաւ թևիցս ու լեատարաւ։

—Խնդրում եմ, ծակ, մի անիր այդ բանը, ասաց նա։ Երդւում եմ բոլոր սրբութիւնով, որ մի քանի օրից յետոյ կըպատմեմ, բայց եթէ կըգնաս այսօր այնտեղ, այն ժամանակ դու ինձ մեծ ցաւ կըպատճառես։

Հակառակ բոլոր ջանքերիս, ինձ երբէք չյաջողուեց նրա ձեռքից ազատուել և դռանը մօտենալ։

—Հաւատա՛ ինձ, ծակ, կեանքիդ մէջ գոնէ մի անգամ հաւատա, երբէք չես զղջալու այդ մասին, չէ՞ որ մինչև օրս ոչինչ չեմ ծածկել քեզանից և չեմ էլ ծածկելու, եթէ անհրաժեշտ չըլինէր։ Սրանից կախուած է երկուսիս բախտը։ Դրանք միասին տուն և ամեն բան լաւ կըվերջանայ։ Իսկ եթէ ուզենաս բռնի ոյժով տուն մտնել, այն դէպքում ամեն ինչ վերջացած կըլինի մեր մէջ։

Այս վերջին խօսքերը նա այնպէս վճռականութեամբ ու շեշտով ասաց, որ ես ակամայ նրան հնազանդուեցի և էլ չվստահացայ դռանը մօտենալ։

—Լա՛ւ ուրեմն, ասացի,—կատարում եմ քո խնդիրը, այն պայմանով միայն, որ դու դադարես գիշերային այցելութիւններից և սրանք այլևս չըկրկնուին։ Թող քո մէջը մնայ գաղտնիքդ, միայն սրանից յետոյ ոչինչ չըթագցնես ինձանից։ Անցեալը ես բոլորովին կըմոռանամ, իսկ դու խոստացիր էլ չըկրկնես այսպիսի բաներ։

—Օ՜ հ, խոստանում եմ, ծակ,—ասաց զգալի կերպով սիրտ առած, թող քո ասածը լինի, միայն թէ շուտով հեռանանք այս տանից։

Այս խօսքերով նա թևիցս բռնած՝ հեռացրեց ինձ տանից։ Ես յետ նայեցի, և կրկին տեսայ գեղին դէմքը, որ մեզ էր նայում վերնայարկի պատուհանից։ Ի՞նչ ընդհանուր կապ կար կնոջս և այն

դեղին դէ՛զի մէջ։ Այդ հայեացքը դարձեալ եր-
կիւղ ազդեց վրաս. ես զգացի որ երբէք չըպիտի
կարողանամ հանգստանալ, մինչև որ չըպարզուի
խորհրդաւոր պատմութիւնը։

Երկու օր տանից դուրս չ'եկայ։ Երեւում էր
որ կինս էլ կատարում էր խոստումը, որովհետև
ինձ յայտնի էր որ նա տանից չէր մեկնում։ Եր-
րորդ օրը դարձեալ հիասթափուեցի։

Անշուշտ ոչ մի երդում, որ տալիս է կինը
մարդուն, չի կարող յետ պահել նրան կամքը կամ
գուցէ ցանկութիւնը կատարելուց։

Ես կրկին անգամ քաղաք գնացի, բայց փո-
խանակ երրորդ ժամին տուն դառնալու, ինչ-
պէս սովորաբար լինում էր, դարձայ երկրորդ
ժամին։ Բաղում պատահեց աղախինս վախեցած
դէմքով։

—Ո՞ւր է գնացել տիրուհիդ,—հարցրի նորան։

—Չըգիտեմ, երևի գնացել է զբօսնելու,—
պատասխանեց նա։

Կասկածը զարթնեց իմ մէջ. այստեղ ինչ-որ
թագուն բան է կատարուում, ես բարձրացայ վերև,
որ ստուգեմ, տանն է թէ ոչ, այստեղից պատահ-
մամբ պատուհանից դուրս նայելով՝ տեսայ, որ
աղախինս շնչասպառ վազում էր դաշտի միջով
դէպի շարագուշակ տնակը։

Գաղտնիքը պարզ էր։ Կինս տանից դուրս գա-
լիս՝ աղախնին պատուիրել էր որ հսկէ և եթէ քա-
ղաքից շուտով դառնալու լինեմ, իրան իսկոյն ի-

մաց տայ։ Էլ ինձ զսպել չկարողացայ, ներքև վա-
զեցի և վճռեցի մի անգամից վերջ տալ կատակեր-
կութեանը։

Ճանապարհին ես տեսայ, որ կինս և աղա-
խինը համարեա հեւալով վազում էին նեղ կածա-
նով։ Նրանց չըկանգնեցրի, այլ ուղղակի գնացի
դէպի տնակը, որտեղ պէտք է լուծուէր գաղտնի-
քի հանգոյցը։ Առանց դուռը բաղխելու, սեղմեցի
դռան սողնակը և դուռը բանալով՝ մտայ բագի
մէջ։

Բագում տիրում էր կատարեալ լռութիւն։
Խոհանոցում կրակարանի վրայ դրած էր կաթսան, իսկ
նրանից քիչ հեռու կողովի մէջ պառկած էր կա-
տուն։ Այնտեղ չէր պառաւ կինը։ Ես վստահ
կերպով անցայ միւս դատարկ սենեակը, իսկ այս-
տեղից էլ վերև բարձրացայ և մտայ վերնայարկի
երկու սենեակները, չըպատահելով ոչ մի կենդանի
էակի։ Սենեակների կահաւորութիւնը և պատ-
կերները բոլորովին հասարակ ու կոպիտ էին, բացի
այն սենեակից, որի պատուհանից երկու անգամ
տեսայ դեղին դէմքը։ Նա կահաւորուած էր նուրբ
ճաշակով և շատ շքեղ։ Միայն երևակայեցէք
զայրոյթս, երբ կրակարանի վրայ տեսայ կնոջս
պատկերը, որը նա ստացել էր ինձանից իմ
թոյլտուութեամբ երեք ամիս առաջ։

Երկար մնացի սենեակում անշարժ, որպէսզի
համոզուիմ՝ հիրաւի տան մէջ մարդ չկայ, իսկ յե-
տոյ տուն դարձայ սարսափելի ծանրացած սրտով։

Բագում կինս հանդիպեց, բայց ես այնքան զայրացել էի, որ ոչ մի խօսք չասացի նրան։ Անցայ նրա մօտից և մտայ առանձնասենեակս։ Կինս եկաւ յետևից, իսկ ես չըկարողացայ դուռը փակել։

—Ես շատ եմ տանջւում, Ծակ, այնպէս որ ստիպուած խոստումս դրժեցի, իսկ եթէ գիտենայիր բոլոր մանրամասնութիւնը, գուցէ ներէիր ինձ։

—Ասա՛ ինձ բոլոր ճշմարտութիւնը։

—Ո՛չ, չեմ կարող, Ծակ, եթէ մինչև անգամ ինձ սպանես.—ասաց նա կոտրատելով ձեռքերը լուսահատութիւնից։

—Քանի որ չես ասել ինձ թէ ո՞վ է կենում այն տնակում և ո՞ւմ ես տուել քո լուսանկարը, ես չեմ ուզում քեզ հետ ոչ մի գործ ունենալ, ասացի և դուրս եկայ տանից։

Այդ դէպքը երեկուայ օրն էր, պարոն Խոլմս, նրանից յետոյ նրան էլ չեմ տեսել և ոչինչ աւելի չգիտեմ այդ հանելուկի նման պատմութեան մասին։ Այսպիսի կատակ կեանքիս մէջ առաջին անգամն է պատահում, դրա համար էլ այնպէս մտոլորուած եմ, որ չեմ իմանում թէ ինչ անեմ և ինչ միջոց գործ դնեմ։ Յանկարծ մտածեցի ձեզ դիմել այսօր, ձեզանից խորհուրդ հարցնել և ահա ձեզ մօտ գալով՝ բոլորովին ձեզ եմ ապաւինում։ Խնդրում եմ, եթէ պատմածիս մէջ կայ որևէ թեթի կողմ, հարցրէք ինձ և ես ուրախութեամբ ձեզ կբացատրեմ։ Միայն աղաչում եմ ձեզ, 'ի սէր

Աստուծոյ, ասացէք ինձ.—որքան կարելի է շուտ, ինչ պէտք է անել, որովհետև էլ երկար չեմ կարող դիմանալ այսպիսի յիմար դրութեան մէջ։

Խոլմսը և ես բոլոր ուշադրութեամբ լսում էինք այդ վերին աստիճանի գրգռուած մարդու տարօրինակ պատմութիւնը։ Իմ կենակիցը երկար ժամանակ նստած էր մտածման մէջ, ծնօտը ձեռքերի մէջ բռնած։

—Ասացէք խնդրեմ,—ասաց նա վերջապէս, կարո՞ղ էք երաշխաւորել, որ պատուհանից ձեզ վրայ նայողը իսկապէս մարդկային դէմք էր։

—Դժուար է դրական պատասխան տալ ձեզ, քանի որ թէ առաջին և թէ երկրորդ անգամ բաւական հեռու էի գտնւում պատուհանից,—ասաց նա։

—Բայց ձեր պատմածից երևում է, որ այդ դէմքը շատ մեծ տպաւորութիւն է գործել, ձեզ վրայ։

—Այո՛, որովհետև նրա երեսի գոյնը չափից դուրս անբնական էր, ունէր սաւը և միապաղաղ գծեր. երկու անգամն էլ, հէնց որ ուզում էի մօտենալ, նա վայրկենաբար անհետանում էր։

—Որքա՞ն ժամանակ է, որ ձեր կինը հարիւր ֆունտ ստերլինգ է ստացել ձեզանից։

—Կըլինի երկու ամիս։

—Դուք արդեօք երբևէ ժամանակ տեսել էք ձեր կնոջ առաջին ամուսնու պատկերը։

—Ո՛չ, նրա մահից յետոյ Ատլանտում մեծ

հրդեհ պատահեց, որը լափեց կնոջս բոլոր թղթերը։

—Ապա ինչպէս էր պահել կինդ ամուսնու մահուան վկայականը, կարծեմ ասացիք թէ տեսել էք վկայականը։

—Այո՛, հրդեհից յետոյ նրան տուել են վկայականի պատճէնը։

—Դուք ճանաչո՞ւմ էք մի որևէ մարդու, որ ծանօթ լինէր ձեր կնոջը Ամերիկայում եղած ժամանակ։

—Ոչ՝։

—Նա չէ՞ առաջարկել ձեզ երբևէ ժամանակ գնալ Ամերիկա։

—Ոչ՝

—Շատ կարելի է, որ կինդ այնտեղից նամակներ էր ստանում։

—Ոչ՝, գոնէ ես այդ չըգիտեմ։

—Ներողակալ եմ, այժմ մի փոքր գաղափար կազմեցի այդ գործի մասին։ Եթէ իսկապէս այդ տան մէջ մարդ չի ապրում, այն ժամանակ դժուար կըլինի պարզել գործը, իսկ եթէ նրա բնակիչները, զգուշացած ձեր այնտեղ մտնելուց, միայն ժամանակաւորապէս թողել են բնակարանը, և յետոյ կրկին կրդառնան, այն ժամանակ հեշտ կլինի ճիշտ հասկանալը։ Ահա՛ թէ ինչ խորհուրդ կըտամ ձեզ։ Նորից գնացէք Նոր-Իուրն և կրկին անգամ անցէք տնակի առաջից։ Եթէ կ'երևի որ տան մէջ կան կեցողներ, մի աշխատիք շուտով

ներս մտնելու, այլ անմիջապէս հեռագրեցէք մեզ։ Մենք կըգանք ձեր հեռագրից մի ժամ յետոյ, և այնուհետև կ'որոշենք մեր անելիքները։

—Իսկ եթէ այնտեղ էլ ոչ ոք չի՞ բնակւում։

—Այդ դէպքում վաղը կըգամ ձեզ մօտ և հետ կըխօսինք։ Յ'տեսութիւն. խնդրում եմ աւելորդ մի զայրանաք, քանի որ համոզուած թէ իսկապէս արժէ զայրանալը։

—Ինձ թւում է թէ շատ կեղտոտ կատակ է Վաթսոն,—ասաց Խոլմսը,—ճանապարհ . ձգելով Գրա՝ տ Մօնրոյին մինչև դուռը։ Ի՞նչ է քո կարծիքդ այս պատմութեան մասին։

Ջ. —Այո՛, ես էլ նոյն կարծիքին եմ, ինչ որ դո՛ ես, պատասխանեցի։

—Իմ կարծիքով այստեղ մի կեղծիք կայ, եթէ չեմ սխալւում։

Վ. —Իսկ ո՞վ է կեղծողը։

Խ —Նա կըլինի, ով որ ապրում է կահաւորուած սենեակում, ուր մօտ գտնւում է լուսանկարը։ Ինձ շատ է հետաքրքրում դեղին դէմքը և ես երբէք չեմ հանգստանալ մինչև որ չըգիտենամ գաղտնիքը։

Ա —Բայց դու որևէ անձնական գաղափար կազմեցիր այդ մասին։

Խ. —Անշուշտ, և շատ կըզարմանամ, եթէ որ ենթադրութիւնները սխալ դուրս գան։ Իմ կարծիքով տնակում կենում է տիկին Մօնրոյի առաջին ամուսինը։

—Ինչու համար ես այդպէս կարծում։

—Ապա ինչ կերպ բացատրել նրա երկիւղը, երբ պարոն Մ՚ոնրոն ուզում էր տուն մտնել, իսկ կինը արգելում էր։ Ահա այսպէս է իմ կարծիքով գործի դրութիւնը։ Կինը ամուսնացել է Ամերկայում։ Նրա ամուսինը ցոյց է տուել իւր բնակութեան տգեղ կողմերը, գիւղաք, ասենք, կտարել է որևէ զզուելի գործ։ Նա նրանից փախել, դարձել է Անգլիա ուրիշ անուան տակ, նպատակ ունենալով նոր կեանք սկսել։ Այսպիսով նա ամուսնանում է երկրորդ անգամ, համարելով իրան կատարեալ ապահով դրութեան մէջ։ Կինը մարդուն ցոյց է տուել մի ուրիշ անձի մահուան վկայական, ում անունը որ վերցրել էր իւր վրայ։ Յանկարծ կնոջ առաջին ամուսինը գտնում է նրա բնակութեան տեղը, կամ գտնողը հէնց արտաքինով այն զզուելի պառաւն էր, որն այնպէս խիստ կերպով վերաբերուեց պարոն Մ՚ոնրոյին։

Նրանք նամակ գրեցին նրան, սպառնալով գալ և մատնել տիկնոջը։ Տիկինն ստիպուած հարիւր ֆունտ խնդրեց և նրանց ուղարկեց, որպէս զի ազատուի իրան հալածողներից։ Զնայելով այդ վարմունքին, նրանք գալիս են։ Երբ պարոն Մ՚ոնրոն գալու լուրը հաղորդում է կնոջը, որ անծանօթ մարդիկ եկել են ու տնակում բնակւում, տիկինն իսկոյն հասկանում է նրանց ով լինելը և յարմար վայրկեան գտնելով՝ ծածուկ դուրս է գալիս տանից ու գնում նրանց մօտ, խնդրելու որ

իրան հանգիստ թողնեն։ Առաջին անգամ նա անյաջողութեան հանդիպելով՝ հետևեալ առաւօտը կրկին անգամ գնում է այնտեղ, ուր և հանդիպում է իւր ամուսնուն։ Կինը նրան խոստանում է այլևս տնակը չըգնալ, բայց երկու օրից յետոյ դաժան հարևաններից ազատուելու յոյսն այնքան շատ է սկսում տանջել իրան, որ նա վճռում է վերջին փորձն անել, գնալով այնտեղ՝ վերցնել իւր տուած լուսանկար պատկերը։ Այս խօսակցութեան միջոցին ներս է վազում աղախինը և իմաց է տալիս իւր տիրոջ վերադարձը։ Կինը համոզուած լինելով որ իւր ամուսինը շուտով տնակը կըմտնի, ուստի նրանց ստիպում է կողմնակի դռնով փախչել դէպի անտառը։ Այս է պատճառը, որ Մ՚ոնրոն տանը բոլորովին մարդ չտեսաւ։ Ինձ մեծ զարմանք կըպատճառէ, եթէ նրանք մինչև երեկոյ տուն չըվերադառնան։ Դու ինչ կարծիք ունես իմ ենթադրութիւնների մասին։

—Այդ բոլորն էլ լոկ ենթադրութիւններ են։

—Որոնք միևնոյն ժամանակ պարզում են բոլոր փաստերը։ Այժմ մենք ենթադրում ենք այն փաստերի հիման վրայ, որոնք գտնւում են մեր ձեռքում, իսկ երբ նորերը կ՚ունենանք, այն ժամանակ միջոց կըլինի այլ կերպ մտածելու։ Առայժմ մնում է մեզ տեղեկութիւն ստանալ Նորֆուրնի մեր բարեկամից։

Սակայն մեզ երկար սպասելու պէտք չեղաւ։ Դեռ ևս թէ՛ խմելը չէինք վերջացրել, հեռագիրն ստացանք, որով հաղորդում էր, թէ տեսայ նորից գեղին դէմքը պատուհանից և եօթը ժամին ձեզ կ'սպասեմ երկաթուղու կայարանում։

Մենք գնացինք, և ճիշտ որ Մօնրոլին գտանք պլատֆորմի վրայ։ Վառած լապտերների լոյսի տակ նա երևեց մեզ սաստիկ գունատ և գրգռուած։

—Նրանք դեռ այստեղ են, պարոն Խոլմս, ասաց նա, ձեռքը դնելով իմ բարեկամի ուսին։ Պատուհանում լոյս նկատեցի, երբ դէպի կայարանն էի գալիս։ Պէտք է շտապել, քանի դեռ չեն փախել։

—Ի՞նչ է ձեր ծրագիրը,—հարցրեց Խոլմսը, երբ մենք անցնում էինք խիտ ծառերի ստուերների տակից։

—Ես միտք ունիմ բռնի կերպով տուն մտնել և իմանալ, թէ ո՞վ է կենում այնտեղ։ Իմ ցանկութիւնն է, որ դուք միայն վկայ լինիք։

—Նշանակում է ուրեմն հաստատ վճռել էք այդ կերպ վարուել, ուշք չդարձնելով ձեր կնոջ նախապէս զգուշացնելուն, որ համոզում էր չշտապել։

—Այո՛, ես հաստատ վճռել եմ այսպէս վարուել։

—Ես կարծում եմ, դուք իրաւունք ունիք։ Սմեն մի ճշմարտութիւն, ինչպէս էլ որ լինի, լաւ է անլայտութիւնից։

Սաստիկ մութ գիշեր էր. մենք դուրս եկանք մեծ ճանապարհից և գնացինք նեղ շաւղով։ Բարակ անձրև էր մաղում։ Պարոն Մօնրոն անհամբեր կերպով գնում էր մեր առաջից, իսկ մենք հետևում էինք նրան։

—Ահա այն լոյսը, որ երևում է, իմ տան պատուհաններից,— շշնջեց նա,—ցոյց տալով լոյսը ծառերի միջից. ահա և այն տնակը, որտեղ մենք պէտք է գնանք։

Իսկոյն այդ միջոցին շաւիղը ծռուեց և մենք կանգ առանք դռան մօտ։ Լոյսի դեղին փունջը ընկնելով սև հողի վրայ, ցոյց էր տալիս, որ դուռը ամուր փակուած չէ։ Վերևը մի պատուհան կար խիստ լուսաւորուած։ Ցած թողած վարագոյրի վրայ մի քանի անգամ նշմարուեց ինչ-որ մի ստուեր։

—Տեսէք, ահա նա այստեղ է—գոռաց Մօնրոն,—յամենայն դէպս, տան մէջ մարդ կայ։ Զատուենք, և շուտով ամեն ինչ կըպարզուի։

Մենք դեռ նոր էինք մօտենում դռանը, յանկարծ խաւարի մէջ մի կին դուրս թռաւ և կարեց մեր ճանապարհը։ Պատուհանից ընկնող աղօտ լոյսը չափազանց թոյլ էր, այնպէս որ մենք չէինք կարող որոշել նրա դէմքը։

—Աղաչում եմ, ծա՛կ, մի՛ անիր այդ բանը, թախանձում էր կինը։ Ես համոզուած էի որ դու կըգաս այստեղ այս երեկոյ, բայց համբերիր մի փոքրը և չես ցաւիլ այդ մասին։

—Ես շատ համբերեցի ու հաւատացի քեզ, Էֆֆի,—կտրեց նրա խօսքը զայրացած ամուսինը. մի արգելիր ինձ, ես կամենում եմ ներս մտնել։ Իմ բարեկամները և ես վճռել ենք բանալ դաղտնիքը և բոլորն իմանալ։ Այս ասելով նա հրեց կնոջը մի կողմ, ներս մտաւ, իսկ մենք հետևեցինք նրան։

Դուռը բացուելիս, բակի մէջ դէմ վազեց պառաւը և ուզեց ճանապարհը կտրել։

Մօնրոն կոպտութեամբ յետ մղեց նրան և մի քանի թռիչքներ գործելով բարձրացաւ վերին յարկը։ Նա ներս վազեց լուսաւորուած սենեակը, իսկ մենք կանգնեցինք դռան շէմքում։

Մաքուր, գեղեցիկ կահաւորուած սենեակ էր այն, երկու վառած մոմեր դրուած էին սեղանի վրայ, երկուսն էլ կրակարանի վրայ։ Սենեակի մի անկիւնում կուչ էր եկել մի էակ, որ նման էր աղջկայ։ Նա դէմքը ծածկել էր մեզանից ու մէջքը մեր կողմն էր դարձրել։ Այնուամենայնիւ, մենք տեսնում էինք, որ նա հագել էր կարմիր շրջազգեստ և ձեռքերին անցրել էր երկար ձեռնոցներ։ Երբ նա երեսը դէպի մեզ դարձրեց, ես ակամայ բղաւեցի երկիւղից ու զարմանքից։ Ինձ աւելի զարմացրեց նրա դէմքի մթապաղաղ լինելը և կաշուի աչքի ընկնող մեռելային դեղին գոյնը։ Նուռով դաղտնիքը բացուեց։

Խոլմսը ծիծաղելով ձեռքը երկարացրեց երեխայի ականջին և իջեցրեց դէմքը ծածկող դիմակը

Մեր առաջ կանգնել էր մի գեղեցիկ փոքրիկ նեգրուհի, հիանալի սպիտակ ատամներով, որ հետաքրքրութեամբ նայում էր մեր ապշած երեսներին։ Ես բարձր ձայնով ծիծաղեցի, իսկ Մօնրոն սառել, ձեռքերը կուրծքին դրած, կանգնել էր։

—Աստուած իմ,—կցեց նա վերջապէս,—այս ինչ է նշանակում։

—Ես կբացատրեմ քեզ թէ ինչ է նշանակում, ասաց ներս մտնող կինը հոլարտ և վէս կերպարանքով։ Բռնութեամբ դու ինձ ստիպեցիր խոստովանուել։ Այսուհետև էլ իրաւունք չունես ինձ յանդիմանելու։ Իմ առաջին ամուսինը մեռաւ Ատլանտում, բայց երեխան մնաց կենդանի։

—Բա՞ երեխան։

Նա կրծքից հանեց արծաթէ մի մեծ մետալիոն, որ կրում էր զարդարանքի տեղ։

—Դու չէիր իմանում որ այս մետալիոնը կը-բացուի։

—Այո՛, երբէք չէի մտածել այդ մասին։

Նա սեղմեց զսպանակը և իսկոյն դուրս թռաւ ներքին փեղքը։ Փեղքի վրայ, ապակու տակ կար ըստ երևոյթին կրթուած շատ գեղեցիկ տղամարդու մի պատկեր, որի դէմքի գծերը որոշ կերպով ցոյց էին տալիս նրա աֆրիկական ծագումը։

—Այս է ատլանդացի Ջոն Էբրոնի պատկերը, ասաց տիկինը,—աշխարհիս ամենաբարեկիրթ մարդու։ Ես արհամարեցի մեր սպիտակ ցեղի նախապաշարմունքը և ամուսնացայ նրա հետ։ Մեր ա-

մուսնական բոլոր կեանքում ոչ մի անգամ չը-
ղջացի կատարածս անձնազոհութեան համար։
Միակ դժբախտութիւնն այն եղաւ, որ երեխան
ծնուեց հօր նման և ոչ թէ մօրը։ Այսպէս շատ
անգամ է պատահում նման խառնակ ամուսնու-
թիւնների մէջ։ Իմ փոքրիկ Լիւսին անհամեմատ
աւելի սև է քան թէ իւր հայրը։ Բայց ինչ գոյն
էլ ունենար, սև թէ սպիտակ, նա իմ թանգագին
աղջիկն էր, իմ հպարտութիւնը։

Այս խօսքերի վրայ փոքրիկ սև էակը վազեց
մօր մօտ և ձեռքերով փաթաթուեց մօր շորերին։
Ես նրան թողի Ատլանտում միայն նրա համար,
որ նա հիւանդ էր և կլիմայի փոփոխութիւնը
վատ կ'ազդէ նրա թոյլ առողջութեան վրայ։ Ես
նրան յանձնեցի մեր հաւատարիմ Շոտլանդացի
պառաւ աղախնի խնամքին։ Չէր անցնում մի ժամ,
մի օր, որ չըյիշէի իմ անգին մանկանը։ Այնու-
հետև ես հանդիպեցի քեզ, համոզուեցի որ քեզ
սիրում եմ, ծակ, բայց վախեցայ քեզ ասել բոլոր
ճշմարտութիւնը։ Վախեցայ մի գուցէ քեզանից
զրկուեմ, այդ պատճառով էլ վճռեցի չըխոստո-
վանուել, որ ես երեխայ ունեմ։ Դժուար ընտրու-
թիւն առաջ եկաւ, իսկ ես թուլութիւնից այն
արի, ինչ որ երբէք իրաւունք չունէի անելու,
այսինքն ընդունեցի քո առաջարկութիւնը։ Երեք
տարուայ ընթացքում խղճի խայթն ինձ տանջում
էր, իսկ երեխայի վիշտն ինձ մաշում։ Ես զգա-
նիքը պահում էի, որովհետև ծծմօր տուած տե-

ղեկութիւնները մխիթարական էին։ Վերջապէս իմ
մէջ բորբոքուեց երեխային տեսնելու բուռն ցան-
կութիւնը։ Ես երկար կռուեցի այդ ցանկութեան
դէմ, բայց աւաղ, որքան և այդ քայլը վտանգա-
ւոր էր, այնուամենայնիւ սիրտ արի նամակով
կանչել երեխային. գոնէ մի քանի շաբաթ մնալու
մտքով։ Այդ նպատակով Ամերիկա ուղարկեցի
հարիւր ֆունտ ստերլինգ և ծծմօրը տուի ման-
րամասն հրահանգներ, թէ ինչ կերպ բերէ և
բնակուի այս տնակում։ Ես բոլոր նախազգուշու-
թիւններն արի, որ մեր շրջակայքում ոչ ոք չի-
մանայ սև երեխայի մասին և դրա համար ծծմօրը
պատուիրեցի, որ հսկէ և պահէ երեխային դիմա-
կով և երկար ձեռնոցներով։ Անշուշտ կարելի էր
աւելի խելօք բան մտածել, բայց երկիւղը, որ դու
կարող ես իմանալ բոլոր ճշմարտութիւնը, վճռա-
պէս զրկեց ինձ խելքից։

Դու ինձ առաջին անգամ հաղորդեցիր հա-
ճելի նորութիւնը, տնակում կեցողների մասին։
Ողջ օրը անհամբեր այրուելով սպասում էի, որ-
քան կարելի է շուտ տեսնել և գգուել հարազատ
զաւակիս, մինչև որ վերջապէս գիշերով կամա-
ցուկ փախայ այստեղ, կարծելով, որ արդէն խո-
ը քնած կըլինիս։ Հետևեալ օրը դու ամեն ինչ
կիմանայիր, եթէ չըհնազանդուէիր ինձ մի քանի
օր սպասելու համար։ Երեք օր յետոյ երբ տուն
մտայ, ծծմայրը [illegible] հագիւ-հաղ փախցրեց
[illegible] մանկի դռնից։ Այժմ դու ամեն

ինչ գիտես, և ինձ հետաքրքիր է իմանալ, թէ ինչպէս կըվարուես ինձ և երեխայիս հետ։

Այս խօսքերն ասելիս, նա ձեռքերի մատներն իրար մէջ սեղմեց և սպասում էր պատասխանի։

Անցան երկու երկար ու մաշող րոպէներ, վերջապէս Դրան-Մօներսն խզեց տիրող լռութիւնը։ Ես միշտ սիրում եմ լիշել այս տեսարանը։ Նա գրկեց փոքրիկ աղջկան, ջերմ կերպով համբուրեց նրան, իսկ ապա բռնեց կնոջ թևը, ոչ մի խօսք չասելով՝ երկուսին էլ տարաւ դէպի դուռը։

—Այդ մասին մենք աւելի յարմար կարող ենք տանը խօսել,—ասաց նա։—Ես ինձ շատ լաւ մ[illegible] չեմ համարում, էֆֆի, բայց և այնպէս, կարծում եմ դու վստահութեամբ կարող էիր հաւատալ [illegible] գաղտնիքը, առանց այս միջոցներին դիմելու։ Մենք դուրս եկանք տանից,նրանցից յետոյ։Մտնելով շաւղին, Խոլմսը բռնեց թևիցս ու շշնջաց։

—Ես կարծում եմ, որ մեր ներկայութիւնն աւելի օգտակար կըլինի Լոնդոնում, քան թէ այստեղ—Նոր-Բուրում։

Այնուհետև նա ոչ մի խօսք չարտասանեց, մինչև գիշեր, իսկ երբ մոմը ձեռքին ննջարան մտաւ քնելու՝

—Խնդրում եմ, Վատսոն,—ասաց նա,—եթէ երբևէ ժամանակ նկատես, որ մոռանում եմ ինքս ինձ և մեծ կարծիք ունեմ իմ մասին, շշնջա՛ ա-կանջիցս միայն մի խօսք, «Նոր-Բուրն» ինձ դրա համար շատ շնորհակալ կըլինիմ։ տու[illegible]

«Ազգային գրադարան»
NL0171382